

02/06/2009
համար 166-Ն

«ԲԱՆԿԵՐԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՋԵՐՆԵՐԻ, ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ»
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/03-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
31.08.10թ. թիվ 220 Ն, 31.08.10թ. թիվ 220 Ն, 16.08.11թ. թիվ 210 Ն որոշմամբ կատարված
փոփոխությունները

Հիմք ընդունելով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Ապահովագրության և
ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
84-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ և 96-րդ հոդվածի 2-րդ մասերը, «Ավտոտրանսպորտային
միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր
ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասը, «Վարկային
կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ
հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը, «Արժեթղթերի շուկայի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ, 70-րդ և 83-րդ
հոդվածները, 182-րդ հոդվածի 2-րդ մասը, „Ներդրումային ֆոնդերի մասին,, ՀՀ օրենքի
94-րդ հոդվածի 2-րդ մասը, „Կուտակային կենսաթոշակների մասին,, ՀՀ օրենքի 29-րդ
հոդվածի 2-րդ մասը, «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ, 4-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը,
«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային
կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ
հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը և ղեկավարելով «Իրավական ակտերի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և «Հայաստանի
Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհուրդը.

Ո թ ո շ ու մ է.

1. Հաստատել «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական
ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների,
ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական ղեկավարության և
դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային
կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ
8/03-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի սեպտեմբերի 30-ից:

3. Սույն որոշումը ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունիսի 30-ի «Բանկերի կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգը» թիվ 303Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի «Ապահովագրական ընկերությունների կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգը» հաստատելու մասին թիվ 198 Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի ««Ապահովագրական բրոքերային կազմակերպությունների և դրանց պատասխանատու անձանց վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, ձևերը, պարբերականությունը» 3/06 կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 335Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի ««Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 93 Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ի 6-րդ գլուխը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի «Ներդրումային ընկերությունների կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման կարգը» հաստատելու մասին» թիվ 268-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի թիվ 333 Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 22-ի 20-րդ կետի 1-ին և 2-րդ նախադասությունները:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/03

Կանոնակարգ 8/03 «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող **բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, կենտրոնական դեպոզիտարիայի, դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների** և օտարերկրյա բանկերի, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ֆոնդերի կառավարիչների մասնաճյուղերի (այսուհետև՝ նաև ընկերություն) կողմից իրենց և իրենց ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման նվազագույն պահանջները և կարգը:
2. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բոլոր ընկերությունների վրա, եթե օրենքով այլ բան է նախատեսված տվյալ տեսակի ընկերությունների համար, կամ կոնկրետ դրույթի բովանդակությունից կամ էությունից չի բխում, որ այն վերաբերում է կոնկրետ տեսակի ընկերությանը, կամ տվյալ տեսակի ընկերության նկատմամբ համապատասխան պահանջը սահմանելու իրավասություն օրենքով վերապահված չէ Կենտրոնական բանկին:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները սույն կանոնակարգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունները.
 - 1) **Հրապարակում**՝ տեղեկությունը հրապարակման միջոցներով (մամուլի, գանգվածային լրատվության այլ միջոցներով, ինտերնետով, հայտարարությունների փակցման, տեղեկատվական ամփոփագրերի կամ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցներով) հանրությանը մատչելի դարձնելը:
 - 2) **Հաճախորդ**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն օգտվում է ընկերության կողմից մատուցվող որևէ ծառայությունից, կամ դիմել է ընկերությանը այդ ծառայությունից օգտվելու նպատակով:

3) **Սպառող**՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը օգտվում է կամ կարող է օգտվել ընկերության ծառայություններից:

4) **Տեղեկատվական ամփոփագիր**՝ ընկերության կողմից մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն պարունակող թերթոցներ, ամփոփաթերթեր, բրոշյուրներ, գրքույկներ և այլն:

5) **Բողոք-պահանջ**՝ հաճախորդի կողմից ընկերության, ընկերության գործունեության կազմակերպման, ընկերության կողմից ապրանքի կամ ծառայության մատուցման կամ չմատուցման վերաբերյալ հաճախորդի անգոհունակության արտահայտում բանավոր և(կամ) գրավոր ձևով, ներառյալ նաև «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները:

6) **Բանկային ավանդ**՝ ըստ «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

7) **Կրեդիտ**՝ ըստ «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

8) **Ներդրումային ծառայություններ մատուցող անձ**՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 27-րդ կետով սահմանված ներդրումային ծառայություններ մատուցող անձ:

9) **Բանկ**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղ:

10) **Վարկային կազմակերպություն**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություն:

11) **Ապահովագրական ընկերություն**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերություն կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ:

12) **Ապահովագրական բրոքեր**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական բրոքերային գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող առևտրային կազմակերպություն:

13) **Ներդրումային ընկերություն**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերություն կամ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ:

14) **Կենտրոնական դեպոզիտարիա**՝ բաժնետիրական ընկերություն, որը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և իր կանոններով սահմանված կարգով իրականացնում է կենտրոնացված պահառուի, կենտրոնացված ռեեստրավարի և արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորի գործառնությունները:

15) **Կենտրոնական բանկ**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

16) **Դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություն**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպություն:

17) **Գործունեության վայր**՝ ընկերության գլխամասային գրասենյակ, մասնաճյուղ: Եթե ընկերությունը տվյալ ծառայությունը մատուցում է սպառողին երրորդ անձի (միջնորդի) միջոցով, ապա գործունեության վայր է համարվում նաև՝ միջնորդի այն գլխամասային գրասենյակը, մասնաճյուղը և(կամ) այն վայրը, որտեղ այդ ծառայությունը մատուցվում է:

18) **Ծառայության ընդհանուր պայմաններ՝** այն փաստաթուղթը, որով սահմանվում են տվյալ ծառայության գծով բոլոր հաճախորդների համար կիրառելի՝ ծառայության ստանդարտ պայմանները, ընկերության և հաճախորդի միջև հարաբերությունների ընդհանուր սկզբունքները, ընկերության և հաճախորդի հաղորդակցման կանոնները, ընկերության և հաճախորդի միջև կատարվող գործարքների ընդհանուր պայմանները (օրինակ՝ ապահովագրության ընդհանուր պայմաններ, ապահովագրական բրոքերային ծառայությունների պայմաններ, վարկավորման ընդհանուր պայմաններ):

19) **Փոքր մասնակցություն ունեցող մասնակից՝** ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 10 տոկոսից պակասին տիրապետող մասնակից:

20) **ԱՊՊԱ, Բյուրո, Տեղեկատվական համակարգ, Երաշխավորման ֆոնդ, Բռնու-Մալուս համակարգ՝** ըստ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության:

21) **Հրապարակային, որակավորված ներդրողների ֆոնդ** չհանդիսացող ներդրումային ֆոնդ (այսուհետ՝ ֆոնդ), ենթաֆոնդ, ֆոնդի փայ (այսուհետ՝ փայ), ֆոնդի զուտ ակտիվների արժեք, փայի հաշվարկային արժեք, ֆոնդի կառավարիչ, ֆոնդի պահառու, ֆոնդի գործակալ, բաժնետոմս կամ այլ բաժնային արժեթուղթ (այսուհետ՝ բաժնետոմս), բաց ֆոնդ, փակ ֆոնդ, միջակայքային ֆոնդ, պայմանագրային ֆոնդ, կորպորատիվ ֆոնդ, կենսաթոշակային ֆոնդ՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության:

22) **Իմաստալից հենանիշ՝** համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113 Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում կիրառվող նշանակության:

23) **Փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխությունը՝** յուրաքանչյուր տնօրինման ժամանակահատվածի համար փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխություն՝ արտահայտված տոկոսներով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխություն

$$\frac{\Phi 2U_1 - \Phi 2U_0}{\Phi 2U_0} * 100\%$$

Որտեղ՝

$\Phi 2U_0$ -ն փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ,

$\Phi 2U_1$ -ն փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ:

ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4. Ընկերության կողմից տեղեկություններ հրապարակելիս պահպանվում են հետևյալ ընդհանուր սկզբունքները.

- 1) տեղեկատվությունը ներկայացվում է ճշգրիտ և արժանահավատ,
- 2) տեղեկատվությունը ներկայացվում է ժամանակին և ամբողջական (բավարար չափով),
- 3) տեղեկությունը ներկայացվում է ներկայացուցչական սպառողի համար պարզ և մատչելի լեզվով (տեքստի շարադրանքով)՝ առանց շփոթեցուցիչ, խրթին կամ մոլորեցնող բառերի, արտահայտությունների, խիստ մասնագիտական, տեխնիկական եզրերի,
- 4) հրապարակվող տեղեկատվությունը ներկայացվում է առնվազն հայերեն լեզվով (բացառությամբ օտար լեզուներով տպագրվող թերթերի, հատուկ հրատարակությունների): Ընդ որում, օտար լեզվով հրապարակված տեղեկատվությունը պետք է համապատասխանի դրա հայերեն տարբերակին և նշում պարունակի այն մասին, որ տարբեր լեզուներով հրապարակված տեղեկատվության միջև անհամապատասխանություն բացահայտվելու դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել հայերեն տարբերակով, ինչպես նաև որ նշված խնդրի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը կարելի է ստանալ հայերեն տարբերակից, եթե այդ օտար լեզվով հրապարակված տեղեկատվությունն ամբողջական չէ.
- 5) տեղեկատվությունը շարադրվում է ներկայացուցչական սպառողի համար հեշտ ընթեռնելի տառաչափերով և տառատեսակներով և տեսանելի ձևով (օրինակ՝ հայտարարության ձևով փակցվելու դեպքում տեղադրվի տեսանելի վայրերում),
- 6) տեղեկատվությունը այնպես է ներկայացվում, որ ներկայացուցչական սպառողը հեշտությամբ գտնի իրեն հետաքրքրող տեղեկատվությունը: Օրինակ՝ տեքստը պարունակում է վերնագրեր, առանձին բացատրական նշումներ, բովանդակության վերաբերյալ առանձին բաժին, տեքստի առավել կարևոր մասերը շեղատառերով կամ ավելի մեծ տառաչափերով են արտացոլվում՝ սպառողների ուշադրությունը դրանց վրա հրավիրելու նպատակով,
- 7) ծառայության վերաբերյալ տեղեկատվության բովանդակությունը ներկայացվում է այնպես, որպեսզի ներկայացուցչական սպառողի համար լինի տեղին և իմաստալից ընկերության ծառայությունը հասկանալու և իր պահանջմունքներին համապատասխանությունը գնահատելու տեսանկյունից,
- 8) Այն դեպքում, երբ տեղեկատվությունը պարունակում է համեմատություններ այլ ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների հետ, ապա

ա. այդ համեմատությունները ներկայացվում են անկողմնակալ և հավասարակշռված ձևով, մասնավորապես արգելվում է անբարեխիղճ մրցակցության մեթոդների կիրառումը՝ նշելով այլ ընկերությունների ցանկացած թրություններ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ տեղեկություններն իրականում հավաստի են, թե ոչ,

բ. համեմատություններում նշվում են համեմատությունների համար հիմք հանդիսացած տեղեկությունների աղբյուրները (օրինակ, կոնկրետ հետազոտությունները, կոնկրետ հրապարակումներում ներառված տեղեկատվությունը կամ այլ),

գ. համեմատություններում ներառվում են այն հիմնական փաստերը կամ ենթադրությունները, որոնք հիմք են հանդիսացել համեմատության կատարման համար (օրինակ, երկու ընկերության ավտովարկ համեմատելիս համեմատության հիմքում ընկած ենթադրություն կարող են հանդիսանալ վարկի ժամկետը, գումարը և տոկոսադրույքը (համեմատվում են, օրինակ, 2 տարի ժամկետով, 3 միլիոն գումարով, ֆիքսված անվանական տոկոսադրույքով վարկերը)):

9) Եթե ծառայության մասին տեղեկատվությունում առանձնահատուկ շեշտադրվել են ընկերության կողմից մատուցվող ծառայություններից սպասվելիք օգուտները, ապա միաժամանակ առկայության դեպքում ներկայացվում է անկողմնակալ և աչքի ընկնող ձևով տեղեկատվություն համապատասխան ռիսկերի մասին:

10) Այն դեպքերում, երբ տեղեկությունները պարունակում են դրույթներ ֆոնդի ակտիվների եկամտաբերության վերաբերյալ, ապա

ա. ֆոնդի ակտիվների եկամտաբերությունը հաշվարկվում է կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկման կարգը սահմանող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով:

բ. ֆոնդի ակտիվների եկամտաբերության վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառեն ֆոնդի ակտիվների եկամտաբերության վերաբերյալ տվյալներ առնվազն վերջին 5 օրացուցային տարվա համար (5 օրացուցային տարվանից պակաս ժամկետով գործունեություն իրականացնելու դեպքում ներառվում են ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ տեղեկությունները գործունեության ողջ ժամանակահատվածի համար),

գ. պետք է նշվեն այն աղբյուրները, որտեղից մասնակիցը կարող է առավել մանրամասն տեղեկություններ ստանալ ֆոնդի ակտիվների եկամտաբերության վերաբերյալ (առկայության դեպքում),

դ. այդ տեղեկությունները պետք է ներառեն նախազգուշական դրույթ այն մասին, որ ֆոնդի ակտիվների եկամտաբերության վերաբերյալ նախկին ցուցանիշները չեն նշանակում, որ նմանատիպ ցուցանիշներ անպայմանորեն արձանագրվելու են նաև ապագայում,

ե. պետք է նշում լինի այն մասին՝ արդյոք ակտիվների եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշներում ներառված են ֆոնդի հարկերը, ֆոնդի ակտիվներից գանձման ենթակա վճարները և ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերը, թե ոչ:

11) Այն դեպքերում, երբ տեղեկությունները պարունակում են դրույթներ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխության վերաբերյալ, ապա փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխության վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառեն նախազգուշական դրույթ այն մասին, որ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխության վերաբերյալ նախկին ցուցանիշները չեն նշանակում, որ նմանատիպ ցուցանիշներ անպայմանորեն արձանագրվելու են նաև ապագայում:

5. Սույն կանոնակարգի իմաստով ներկայացուցչական սպառող է միջնակարգ կրթությամբ, ֆինանսատնտեսագիտական կրթություն կամ աշխատանքային փորձ չունեցող, գիտակից, 30 տարեկան ֆիզիկական անձ, եթե այլ թիրախային սպառող նախատեսված չէ ընկերության կողմից տվյալ հրապարակման համար:

5.1. Ընկերությունները պետք է ունենան տնային էջ, ընդ որում՝ սույն կանոնակարգի իմաստով ընկերության տնային էջ է համարվում վերջինիս պաշտոնական ինտերնետային կայքը, որի հասցեն ընկերությունը ներկայացնում է Կենտրոնական բանկ սույն կանոնակարգի 13-րդ կետով սահմանված կարգով: Սույն կետով նախատեսված տնային էջ ունենալու պահանջը չի տարածվում այն ընկերությունների վրա, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, հրապարակային առաջարկի միջոցով ծառայություններ չեն մատուցում ֆիզիկական անձանց: Բոլոր դեպքերում տնային էջ ունեցող բոլոր ընկերությունների տնային էջերը պետք է բավարարեն սույն գլխի պահանջներին:

ԳԼՈՒԽ 4. ԻՆՏԵՐՆԵՏ

6. Սույն գլուխը սահմանում է, ընկերությունների կողմից ինտերնետում՝ ընկերության տնային էջում (այսուհետ՝ կայք) հրապարակման ենթակա տեղեկատվության կազմը, տեղեկատվության նկատմամբ պահանջները, հրապարակման կարգը, պայմանները: Սույն կանոնակարգով սահմանված տեղեկություններից բացի՝ ընկերությունները կարող են իրենց հայեցողությամբ իրենց կայքում տեղադրել օրենքով չարգելված այլ տեղեկություններ:
7. Ընկերություններն իրենց կայքում մշտապես հրապարակում և թարմացնում են «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և (կամ) սույն կանոնակարգով սահմանված տեղեկությունները և մշտապես ապահովում են դրանց հասանելիությունը:
8. Ինտերնետային էջի տեղեկատվության մշտապես թարմացումը նշանակում է, որ սահմանված տեղեկատվության փոփոխության դեպքում այն տեղադրվում է կայքում անհապաղ, բայց ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ եթե օրենքով կամ սույն կանոնակարգով կոնկրետ տվյալ տեղեկատվության համար թարմացման այլ ժամկետ սահմանված չէ:
9. Ընկերությունները ապահովում են իրենց կայքում տեղակայված տեղեկատվության մշտական հասանելիությունը սպառողների համար: Եթե ընկերության կայքը կամ դրա որևէ հատված գտնվում է վերակառուցման մեջ կամ ինչ-որ պատճառով չի գործելու ինչ-որ ժամանակահատվածում, ապա ընկերության կայքի դիմային էջը նշում է պարունակում այդ մասին, ինչպես նաև նշում է այն ժամկետը մինչև երբ կայքը (դրա առանձին հատվածը) չի գործելու և այն հեռախոսահամարները, որոնցով սպառողը կկարողանա սպառիչ և ճշգրիտ տեղեկություններ ստանալ սույն կանոնակարգի 7-րդ կետի համաձայն հրապարակման ենթակա ցանկացած տեղեկատվության վերաբերյալ: Ընդհանուր կայքը կամ դրա առանձին մասերը կայքի վերակառուցման կամ ընկերության մեղքով առաջացած այլ պատճառներով չգործելու ժամկետը չի կարող ավել լինել քան 5 աշխատանքային օրը:

10. Ընկերության կայքում հրապարակված տեղեկությունները ներկայացվում են համակարգված՝ ըստ սույն գլխով սահմանված բաժինների: Ընդ որում սույն գլխով սահմանված բաժինների վերնագրերը կարող են ձևափոխվել, սակայն այնպես, որ վերնագրերից ակնհայտ լինի տվյալ բաժնի բովանդակությունը:
11. Այն դեպքում, երբ ընկերության կայքում հղումներ կան այլ անձանց ինտերնետային կայքերին, ապա ընկերությունը այդ հղմանը զուգահեռ հրապարակում է նաև հայտարարություն այն մասին, որ նա պատասխանատվություն չի կրում այդ կայքերի բովանդակության ստույգության և արժանահավատության, այնտեղ տեղադրված գովազդների համար, և ընկերությունը պատասխանատվություն չի կրում այդ կայքերում տեղադրված տեղեկատվության օգտագործման հնարավոր հետևանքների համար:
12. Ընկերության կողմից կայքում հրապարակման ենթակա տեղեկությունների բացակայության դեպքում նշվում է դրանց բացակայության վերաբերյալ:
13. Ընկերությունը իր կայքի գործարկման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում կայքի հասցեն: Կայքի հասցեի փոփոխության դեպքում կայքի նոր հասցեն տրամադրվում է Կենտրոնական բանկին փոփոխությունից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:
14. Ընկերությունը կայքի յուրաքանչյուր էջի վրա՝ տեսանելի մասում նշում է կատարում, թե երբ է (ամսաթիվ/ամիս/տարի, ժամ, րոպե) թարմացվել տվյալ էջի տեղեկությունը:
15. Ընկերությունները իրենց կողմից մատուցվող ծառայությունների սակագների, փոխարժեքների, միջնորդավճարների և այլ վճարների, ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների փոփոխության դեպքում փոփոխված տեղեկատվությունը տեղադրում են կայքում ոչ ուշ քան նոր սակագնով, փոխարժեքով, միջնորդավճարով կամ այլ վճարով, կամ փոփոխված պայմաններով ծառայության մատուցման պահը: Այն դեպքում, երբ ծառայությունը տարբեր ժամանակահատվածներում մատուցվում է տարբեր ծառայության մատուցման պայմաններով, սակագներով, փոխարժեքով, միջնորդավճարով կամ այլ վճարով, ապա կայքում դրանք նշվում են ըստ ժամանակահատվածների (օր/ամիս/ տարի, ժամ:րոպե), որոնց համար կիրառելի են:
16. Ընկերության կայքի՝ հասցեն մուտքագրելուց հետո հայտնվող առաջին էջում (ընկերության կայքի գլխավոր (առաջին) էջ) անմիջականորեն (ոչ թափվող մենյուի միջոցով) ներկայացվում են հղումներ(լինքեր) առնվազն հետևյալ տեղեկությունները պարունակող էջերին.
 - 1) Ընկերության մասին,
 - 2) Հաշվետվություններ,
 - 3) Մատուցվող ծառայություններ,
 - 4) Բաժնետերեր և ներդրողներ (չի տարածվում դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների վրա),
 - 5) Վերաապահովագրություն (միայն ապահովագրական ընկերությունների համար),
 - 6) Գործակալներ (միայն ապահովագրական ընկերությունների և ֆոնդերի կառավարիչների համար),
 - 7) Կարգավորում,
 - 8) Հետադարձ կապ,
 - 9) Հաճախորդի իրավունքները,
 - 10) Ֆինանսական համակարգի հաշտարար,

11) Բյուրո (միայն ԱՊՊԱ իրականացնող ապահովագրական ընկերությունների համար),

12) Հաշվիչ (առկայության դեպքում):

16.1. Ընկերության կայքի՝ հասցեն մուտքագրելուց հետո հայտնվող առաջին էջում (ընկերության կայքի գլխավոր (առաջին) էջ) անմիջականորեն (ոչ թափվող մենյուի միջոցով) ֆոնդի կառավարիչը հրապարակում է հայտարարություն ֆոնդերի տեսակի փոփոխման, վերակազմակերպման, ինչպես նաև դրանց հետ կապված ֆոնդի կանոններում (կանոնադրությունում) կատարված փոփոխությունների՝ կենտրոնական բանկի կողմից գրանցման մասին՝ համապատասխանաբար իրավասու մարմնի կողմից որոշում կայացնելուց և կենտրոնական բանկում համապատասխան փոփոխությունները գրանցելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան դրան հաջորդող աշխատանքային օրը: Ընդ որում, հայտարարության մեջ ներկայացվում է առնվազն տեղեկատվություն մասնակիցների, նրանց իրավունքների և պարտականությունների վրա ֆոնդերի տեսակների փոփոխության, վերակազմակերպման ազդեցության և հետևանքների մասին, և նշում այն մասին, թե երբ են ֆոնդի կանոնների (կանոնադրության) փոփոխություններն ուժի մեջ մտնում:

17. «Ընկերության մասին» բաժնում ներկայացվում են.

- 1) **ընկերության առաքելությունը/գործունեության նպատակը,**
- 2) **ընդհանուր տեղեկություններ,** որոնք առնվազն ներառում են ընկերության գործունեության պատմության ընթացքում հիմնադրման, վերակազմակերպման, անվանափոխության, գործունեության բնույթի փոփոխության և նման այլ իրադարձությունների մասին տեղեկություններ (նշել նաև այդ իրադարձությունների տարեթվերը),
- 3) **ընկերության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը** գծապատկերի տեսքով: Եթե ընկերությունը ընդգրկված է որևէ խմբի, հոլդինգի, կոնցեռնի, միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա ներկայացվում է տվյալ խմբի, հոլդինգի, կոնցեռնի, միության կառուցվածքը՝ գծապատկերի տեսքով, կամ հղում համապատասխան ինտերնետային էջին, որտեղ առկա է այդ կառուցվածքի գծապատկերային նկարագրությունը,
- 4) ընկերության պետական գրանցման վկայականի և գործող լիցենզիայի(ների) պատճենները, ապահովագրական բրոքերների պետական ռեգիստրի գրանցման համարը,
- 5) ընկերության գլխամասի գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ինչպես նաև մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ցանկը՝ գտնվելու վայրերով, հեռախոսահամարներով և աշխատանքային ժամերով, ընկերության կողմից ֆինանսական ծառայությունների մատուցումը ապահովող ավտոմատ ինքնասպասարկող սարքերի՝ ավտոմատ գանձման մեքենաների (բանկոմատների), ինքնասպասարկման վճարային տերմինալների, արժույթի փոխանակման ավտոմատների ցանկը՝ հասցեներով,
- 6) ընկերության կանոնադրությունը,
- 7) ընկերության կողմից ընդունված գործարար վարվելակերպի և էթիկայի կանոնները (առկայության դեպքում):
- 8) **Նշանակալից մասնակիցների** վերաբերյալ ներկայացվում են.

ա. տվյալ տեսակի ընկերության գործունեությունը կարգավորող օրենքի համաձայն ուղղակի նշանակալից մասնակիցների անունը (անվանումը), ընկերությունում իրենց ունեցած մասնակցության չափը, մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար),

բ. տվյալ տեսակի ընկերության գործունեությունը կարգավորող օրենքի համաձայն անուղղակի նշանակալից մասնակիցների անունը (անվանումը), անուղղակի նշանակալից մասնակցի գործունեության տեսակը, այն ուղղակի նշանակալից մասնակցի անունը (անվանումը), որի միջոցով մասնակիցը ձեռք է բերել անուղղակի նշանակալից մասնակցի կարգավիճակ կամ այն պահանջը, որի ուժով անձը (անուղղակի նշանակալից մասնակցը) կարող է ազդել ընկերության (կամ ընկերության ուղղակի նշանակալից մասնակցի) որոշումների և գործունեության ուղղությունների վրա (օրինակ՝ խոշոր ավանդատու), առկայության դեպքում՝ նաև տվյալ ընկերությունում մասնակցության չափը,

գ. ապահովագրական բրոքերը ներկայացնում է նաև այն ընկերությունների ցանկը, գործունեության տեսակը, որոնց կանոնադրական կապիտալում ունի նշանակալից մասնակցություն

դ. ընկերության դուստր ընկերությունների անվանումները և գործունեության ոլորտը:

9) Ղեկավարների վերաբերյալ.

ա. ընկերության ղեկավարների ցանկը, անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, տվյալ ընկերությունում զբաղեցրած պաշտոնը: Ապահովագրական բրոքերները նաև՝ ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձանց՝ Կենտրոնական բանկի ռեգիստրում գրանցման համարը: Ներդրումային ընկերությունները և ֆոնդի կառավարիչները նաև՝ մասնագիտական որակավորման վկայական ունեցող աշխատակիցների որակավորման (մատուցվող ծառայության) տեսակը:

բ. սույն ենթակետի «ա» պարբերության համաձայն ղեկավարների ցանկում առնվազն ընդգրկվում են ընկերության խորհրդի (խորհուրդ ձևավորելու դեպքում) անդամները և նախագահը, գործադիր տնօրենը (վարչության նախագահը), նրա տեղակալը (տեղակալները), գործադիր մարմնի անդամները, գլխավոր հաշվապահը, ներքին աուդիտի (առկայության դեպքում) ղեկավարը, ապահովագրական ընկերության կողմից նաև՝ պատասխանատու ակտուարները, ապահովագրական բրոքերի կողմից նաև՝ ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձինք, ներդրումային ընկերությունների կողմից նաև՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք, ֆոնդի կառավարիչների կողմից՝ ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք:

10) Դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների համար պարտադիր է միայն սույն կետի (1), (2), (4), (5) ենթակետերում նշված տեղեկատվության ներկայացման պահանջը:

18. «Հաշվետվություններ» բաժնում ներկայացվում են ընկերության.

- 1) միջանկյալ (օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում) և տարեկան ֆինանսական հաշվետվությունները (ներառյալ կից ծանոթագրությունները) և արտաքին աուդիտորական ընկերության աուդիտորական եզրակացությունը: Ընդ որում ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության հրապարակումը պետք է բավարարի սույն կանոնակարգի 8-րդ գլխում սահմանված պահանջներին:
- 2) Հղումներ ընկերության՝ հաշվետու տարվան նախորդ երեք տարիների տարեկան ֆինանսական հաշվետվություններին (առկայության դեպքում):
- 3) հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունը եռամսյակային կտրվածքով մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը (չի տարածվում դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների, կենտրոնական դեպոզիտարիայի վրա),
- 4) հղումներ նորմատիվների վերաբերյալ նախորդ եռամսյակների հաշվետվություններին (առնվազն նախորդ 4 եռամսյակների կտրվածքով) (չի տարածվում դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների, կենտրոնական դեպոզիտարիայի վրա),
- 5) գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները (առկայության դեպքում):

19. Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունները հրապարակում են՝

- 1) բանկերը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի, (իսկ ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում՝ սույն կանոնակարգի հավելված 2-ով)
- 2) ապահովագրական ընկերությունները՝ համաձայն սույն կարգի հավելված 3-ի (իսկ ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում՝ սույն կարգի հավելված 4-ի)
- 3) ներդրումային ընկերությունները՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 5-ի, իսկ ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 6-ի:
- 4) վարկային կազմակերպությունները՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 7-ի: Ընդ որում, այն վարկային կազմակերպությունները, որոնք իրենց կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով չեն ներգրավում փոխառություններ, ապա հրապարակում են հավելված 7-ի հաշվետվության միայն «Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը» և «Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը» տողերը և տեղեկատվություն այն մասին, որ իրենց կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չեն ներգրավում, հետևաբար մնացած հիմնական տնտեսական նորմատիվները իրենց վրա չեն տարածվում:
- 5) ֆոնդի կառավարիչները՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 10-ի, իսկ ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 11-ի:

20. **Հիմնական տնտեսական նորմատիվների** վերաբերյալ հաշվետվությունում ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից հաստատված հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի և թույլատրելի մեծությունները: «Փաստացի մեծությունը» սյունակում ամսական հաշվարկվող նորմատիվների համար արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա նորմատիվի փաստացի մեծությունը: «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը» սյունակում արտացոլվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվետու ժամակաշրջանի համար նորմատիվների թույլատրելի մեծությունը: «Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը» սյունակում արտացոլվում է յուրաքանչյուր նորմատիվի գծով խախտումների քանակը, իսկ եթե խախտում առկա չէ, համապատասխան տողում լրացվում են «խախտում առկա չէ» բառերը:
21. Բանկերի համար՝ Կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափի գծով «Փաստացի մեծությունը» սյունակը չի լրացվում: Պարտադիր պահուստավորման նորմատիվը հաշվարկելիս վերջին ժամանակաշրջան է համարվում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված պարտադիր պահուստավորման օրացույցի վերջին 28 կամ 35 օրերը:
21. 1 Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցության նորմատիվները ներկայացվում են ըստ ԱՄՆ Դոլարի, Եվրոյի և Ռուսական ռուբլու՝ անկախ վերջիններիս արժեքից, իսկ մնացած արտարժույթների գծով լրացվում է միայն «Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը» սյունը:
22. Եթե ընկերության արտաքին աուդիտի եզրակացությամբ ճշգրտված և հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունների համաձայն ընկերությունը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվ (նորմատիվներ), ապա ընկերությունը վերահրապարակում է այն եռամսյակների ճշգրտված հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունները, որոնցում հրապարակվող հաշվետվությունների ճշգրտման արդյունքում առաջացել է նորմատիվի (նորմատիվների) խախտումը: Ընդ որում, սույն կետով սահմանված պահանջը գործում է այն դեպքերում, երբ հրապարակվող հաշվետվությունների ճշգրտման պատճառը եղել էր հաշվապահական հաշվառման սխալը:
23. Սույն կանոնակարգի 22-րդ կետով սահմանված հաշվապահական հաշվառման սխալ չի համարվում Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների, Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման», Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 188 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման», Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 25-ի թիվ 73Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման» կարգերի դրույթների միջև առկա տարբերությունների հետևանքով առաջացած շեղումները:

24. **«Մատուցվող ծառայություններ»** բաժնում ներկայացվում են ընկերության կողմից փաստացի մատուցվող ծառայությունների վերաբերյալ սույն կանոնակարգի 9-րդ գլխով սահմանված տեղեկությունները: Ընդ որում.

- 1) Մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ըստ թիրախային խմբերի կամ նպատակային շուկաների, եթե ընկերության կողմից որդեգրվել է նման քաղաքականություն: Օրինակ, ծառայություններ ֆիզիկական անձանց, փոքր և միջին ձեռնարկություններին, խոշոր ձեռնարկություններին:
- 2) Ընկերության կողմից որևէ ծառայության մատուցումը կամ մասնաճյուղի գործունեությունը ժամանակավոր կամ ընդմիջտ դադարեցվելու դեպքում նաև տեղադրվում է հայտարարություն, որը պարունակում է դադարեցված մատուցվող ծառայության անվանումը (ծառայության դադարեցման դեպքում) կամ գործունեությունը դադարեցրած մասնաճյուղի անվանումը և գտնվելու վայրը, ինչպես նաև դադարեցման պատճառը կամ համառոտ բնութագիրը, դադարեցման ժամանակահատվածը, հեռախոսահամար և(կամ) կապի այլ միջոցներ, որով հնարավոր է մանրամասն տեղեկություններ ստանալ դադարեցված ծառայության(ների) վերաբերյալ, նշում այն մասին, թե ինչ այլընտրանքային միջոցներով սպառողը կարող է օգտվել տվյալ ծառայությունից(ներից): Ժամանակավոր դադարեցման դեպքում հայտարարությունը տեղադրվում է ժամանակավոր դադարեցման ողջ ժամանակահատվածի ընթացքում, ընդմիջտ դադարեցման դեպքում՝ դադարեցումից հետո 3 ամսվա ընթացքում:

25. **«Բաժնետերեր և ներդրողներ»** բաժնում ներկայացվում են.

- 1) Ընկերության թողարկած արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Կենտրոնական բանկի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի համաձայն ինտերնետում բացահայտման ենթակա տեղեկատվությունը:
- 2) Կանոնադրական կապիտալի փոփոխության մասին տեղեկատվությունը՝ այդ փոփոխությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3) Եթե ընկերությունը արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում չի իրականացնում, ապա ներկայացվում է սույն կետում նշված տեղեկատվությունը.

ա. Տարեկան ընդհանուր ժողովի, ինչպես նաև բաժնետերերի (մասնակիցների) ժողով հրավիրելուն առնչվող տեղեկատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

բ. Ընթացիկ տարվա ընթացքում շահութաբաժիններ վճարելու մասին որոշումը (որոշումները) և հղումներ նախորդ տարիներին ընդունված նմանատիպ որոշումներին (առնվազն վերջին երեք տարվա կտրվածքով):

գ. Շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերը (առկայության դեպքում),

դ. Հայտարարություն յուրաքանչյուր մասնակցի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով

սահմանված տեղեկությունների ստացման (ծանոթանալու) հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի, ժամկետի, տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարի մասին: Ընդ որում հայտարարությունում հղում է կատարվում այն իրավական ակտին և ակտի հոդվածին, համաձայն որի ծագում է նման իրավունքը և այն հասցեին, որտեղ տեղադրված է համապատասխան օրենքը:

Օրինակ՝ «ԱԱԱ» բանկի յուրաքանչյուր մասնակից համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի իրավունք ունի ստանալու բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 2%-ին և ավելին տիրապետող յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված տեղեկությունները: Օրենքը կարող եք գտնել՝ www.AAAbank.am/legislation/bankslaw.ppt հասցեում:

Վերոնշյալ տեղեկությունները բանկը տրամադրում է ԱՆՎՃԱԲ մասնակցի գրավոր դիմումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում: Գրավոր դիմումը կարող է ներկայացվել հետևյալ ձևերով. առձեռն՝ բանկի գլխամասային գրասենյակում, ցանկացած մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, էլեկտրոնային հասցեով՝ investor@aaa.am, կամ փոստով՝ «ԱԱԱ» բանկ ...» հասցեով: »

ե. Խորհրդի անդամների (խորհրդի առկայության դեպքում), գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում ընկերությունից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, ընկերության համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը: Ընդ որում, ընկերությունը կարող է սահմանափակել այդ տեղեկության ընթերցման հնարավորությունը, օրինակ՝ գաղտնաբառերի կիրառման միջոցով: Սույն ենթակետով սահմանված տեղեկությունները հասանելի են դարձվում ընկերության բոլոր բաժնետերերին (մասնակիցներին):

զ. մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հաշվետու եռամսյակի և դրան նախորդող երեք եռամսյակների ընթացքում ընկերության խորհրդի և գործադիր մարմնի անդամների, գլխավոր հաշվապահի և նրանց հետ փոխկապակցված անձանց, նշանակալից մասնակցիների և նրանց հետ փոխկապակցված անձանց հետ կապված հետևյալ տեղեկատվությունը (Ընդ որում, ընկերությունը կարող է սահմանափակել այդ տեղեկության ընթերցման հնարավորությունը, օրինակ՝ գաղտնաբառերի կիրառման միջոցով: Սույն ենթակետով սահմանված տեղեկությունները հասանելի են դարձվում ընկերության բոլոր բաժնետերերին (մասնակիցներին):).

ա ընկերությունից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) չափը (մեկ թվով), կշռված տոկոսադրույքը և այն ժամանակահատվածը,

որի համար հաշվարկված է այդ տեղեկատվությունը: Պարտավորությունները գործող վարկային քարտերի/գծերի և օվերդրաֆտների գծով կարող են ընդգրկվել միջին ամսական մեծությամբ

բ. ապահովագրական ընկերության հետ կնքած ապահովագրական պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը, ապահովագրական սակագինը և ապահովագրական հատուցման մեծությունը:

4) Եթե ընկերությունը արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում չի իրականացնում, չունի փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներ և չի ցանկանում հրապարակել սույն կանոնակարգի 25-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը, ապա ընկերությունը հրապարակում է ընկերության քաղաքականությունը արտահայտող հայտարարություն այն մասին, որ չի հրապարակում ընկերության վերաբերյալ նշված տեղեկատվությունը և չհրապարակման պատճառները:

26. «Վերաապահովագրություն» մասում ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը (համաձայն սույն կարգի հավելված 8-ի)՝

- 1) վերաապահովագրողի անվանումը,
- 2) միջազգային վարկանշող կազմակերպության կողմից ստացված ֆինանսական վարկանիշը կամ գրանցման երկրի կարգավորող մարմնի կողմից տրված այլ վարկանիշը,
- 3) վերաապահովագրողին վարկանշող կազմակերպության անվանումը,
- 4) վերաապահովագրողի ռեզիդենտությունը (գրանցման երկիրը),
- 5) վերաապահովագրողի ինտերնետային կայքը:

27. «Գործակալներ» մասում ներկայացվում են տվյալ ընկերության (ֆոնդի) անունից և հաշվին հանդես եկող գործակալների մասին տեղեկատվություն, այդ թվում գործակալի՝

- 1) անուն, ազգանունը կամ անվանումը (իրավաբանական անձանց համար),
- 2) կենտրոնական բանկում ռեգիստրի համարը (միայն ապահովագրական ընկերությունների համար, բացառությամբ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնող անձանց),
- 3) լիցենզիայի համարը (միայն ֆոնդերի գործակալների համար),
- 4) ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալին տրված լիազորությունները, ներառյալ՝ ապահովագրական միջնորդության գործառույթները, ապահովագրության դասերը, ապահովագրավճարների և (կամ) ապահովագրական հատուցումների սահմանաչափերը,
- 5) ֆոնդի կառավարչի կողմից ֆոնդի գործակալին տրված լիազորությունները՝ ինչպես նաև այն բոլոր ֆոնդերը, որոնց գործակալ է հանդիսանում տվյալ գործակալը, ֆոնդի կառավարչի և ֆոնդի գործակալի միջև կնքված պայմանագրի ժամկետները,

6) հղում գործակալի ինտերնետային կայքին (առկայության դեպքում), գործակալի կապի տվյալները (գործակալի գտնվելու (բնակության) վայր, հեռախոս, աշխատանքային ժամերը):

28. **«Կարգավորում»** մասում հրապարակում են հիմնական օրենքների, նորմատիվ իրավական այլ ակտերի ցանկը, որոնցով կարգավորում են ընկերության կողմից ծառայությունների մատուցումը:

29. **«Հեռադարձ կապ»** մասում ներկայացվում են այն հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային հասցեն(ները), փոստային հասցեն(եր) և այլ կապի միջոցներ, որով սպառողները կարող են կապ հաստատել ընկերության հետ: Եթե ընկերության կողմից մատուցվող ծառայությունը հաճախորդին ուղղակիորեն (ոչ միջնորդավորված) մատուցվում է այլ անձանց կամ կազմակերպությունների կողմից՝ ապա այդ անձանց կամ կազմակերպությունների կապի տվյալները (օրինակ, եթե ապահովագրական ընկերությունը վաճառում է իր ապահովագրության պայմանագրերը ապահովագրական գործակալների միջոցով, կամ բանկը գրավի գնահատումը իրականացնում է անշարժ գույքի գնահատմամբ զբաղվող կոնկրետ անձանց հետ, կամ ապահովագրական ընկերությունը ապահովագրական հատուցումները սպառողներին անկանխիկ վճարում է կոնկրետ բանկի միջոցով, իսկ, օրինակ, SWIFT-ի միջոցով բանկի կողմից փոխանցումների իրականացման դեպքում թղթակից բանկերը չեն նշվում, բանի որ ծառայությունը հաճախորդին ուղղակիորեն չէ մատուցվում):

30. **«Հաճախորդի իրավունքները»** բաժնում ներկայացվում են.

1) Հաճախորդի բողոք-պահանջների վերաբերյալ, այդ թվում՝

ա. հղում բողոք-պահանջները կարգավորող ներքին իրավական ակտին(երին),

բ. հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային հասցեն(ները), փոստային հասցեն(եր) և այլ կապի միջոցներ, որով հաճախորդները կարող են բողոք-պահանջ ներկայացնել ընկերությանը,

գ. հայտարարություն այն մասին, որ ֆիզիկական անձ հաճախորդը հնարավորություն ունի ներկայացնելու ընկերության և հաճախորդի միջև կնքվող գործարքից բխող պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին: Այն դեպքում, երբ ընկերությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել, նշում այդ մասին (համաձայն՝ հավելված 9-ի) :

2) Հայտարարություն ցանկացած անձի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի, ժամկետի, տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարի մասին: Ընդ որում հայտարարությունում հղում է կատարվում այն իրավական ակտին և ակտի հոդվածին, համաձայն որի ծագում է նման իրավունքը:

Օրինակ՝ «Ցանկացած անձ իրավունք ունի ստանալու «ԱԱԱ» ԲԲԸ բանկի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ա. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության պատճենները: Օրենքը կարող եք գտնել՝ www.AAAbank.am/legislation/bankslaw.ppt: Վճարը՝ թղթային մեկ տպագիր էջը 3 դրամ, էլեկտրոնային առաքման դեպքում՝ անվճար:

բ. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ, 120-րդ հոդվածներով, 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները: Վճարումը՝ անվճար: Ժամկետը՝ դիմումը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

գ. Վերոնշված տեղեկություններ բանկը տրամադրում է մասնակցի գրավոր դիմումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ եթե տեղեկատվության կողքին այլ ժամկետ չի նշված: Գրավոր դիմումը կարող է ներկայացվել հետևյալ ձևերով. առձեռն՝ բանկի գլխամասային գրասենյակում, ցանկացած մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, էլեկտրոնային հասցեով՝ investor@aaa.am, կամ փոստով՝ «ԱԱԱ» բանկ ... հասցեով:
»

30.1. «Ֆինանսական համակարգի հաշտարար» բաժնում ներկայացվում են.

- 1) Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հասցեն,
- 2) Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի աշխատանքային ժամերը, կապի միջոցները,
- 3) Հղում Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ինտերնետային կայքին:

30.2. «Բյուրո» բաժնում ներկայացվում են.

- 1) Բյուրոյի հասցեն,
- 2) Բյուրոյի աշխատանքային ժամերը, կապի միջոցները,
- 3) Հղում Բյուրոյի ինտերնետային կայքին:

30.3. «Հաշվիչ» բաժնում ներկայացվում են ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների սակագների, տոկոսադրույքների և այլ հաշվիչներ: Ընդ որում, ԱՊՊԱ իրականացնող ապահովագրական ընկերությունների համար՝

- 1) ԱՊՊԱ-ի գծով ապահովագրավճարների հաշվիչում ներառվող հարցադրումները, դրանց պատուհանների բացատրությունները պետք է լինեն հստակ և միանշանակ,
- 2) ԱՊՊԱ-ի գծով ապահովագրավճարների հաշվիչի բաժնում ներկայացվում են նաև կապի միջոցներ, որով սպառողները կարող են պարզաբանումներ ստանալ ԱՊՊԱ-ի գծով ապահովագրավճարների հաշվիչի հետ կապված հարցերի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 5. ՄԱՍՈՒԼ

31. Ընկերությունը սույն կանոնակարգով և օրենքով սահմանված ժամկետներում առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում (եթե օրենքով այլ տպաքանակ սահմանված չէ) հրապարակում է.
- 1) աուդիտորական ընկերության կողմից հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը (եթե արտաքին աուդիտի պահանջը սահմանված է օրենքով) և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, բացառությամբ կից ծանոթագրությունների: Ընդ որում ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության հրապարակումը պետք է բավարարի սույն կանոնակարգի 8-րդ գլխում սահմանված պահանջներին: Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման պահանջը չի տարածվում վճարահաշվարկային կազմակերպությունների վրա:
 - 2) Ընկերության թողարկած արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Ազդագրի և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի համաձայն մամուլում բացահայտման ենթակա տեղեկատվությունը:
 - 3) Կանոնադրական կապիտալի փոփոխության մասին տեղեկատվությունը՝ այդ փոփոխությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում (սույն ենթակետի պահանջը չի տարածվում վճարահաշվարկային կազմակերպությունների և Կենտրոնական դեպոզիտարիայի վրա):
 - 4) Ֆոնդի կառավարիչների համար՝ հայտարարություն ֆոնդերի տեսակի փոփոխման, վերակազմակերպման, ինչպես նաև դրանց հետ կապված ֆոնդի կանոններում (կանոնադրությունում) կատարված փոփոխությունների՝ կենտրոնական բանկի կողմից գրանցման մասին՝ համապատասխանաբար իրավասու մարմնի կողմից որոշում կայացնելուց և կենտրոնական բանկում համապատասխան փոփոխությունները գրանցելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան դրան հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ընդ որում պետք է նշվեն կապի միջոցները, որոնցով հնարավոր է ստանալ լրացուցիչ տեղեկատվություն:
32. Ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են համաձայն սույն գլխի և սույն կանոնակարգի 8-րդ գլխի:
33. Հաշվետվություններին կից՝ ընկերությունները մամուլում հրապարակում են իրենց կայքի հասցեն՝ նշելով, որ այնտեղ է գտնվում ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը (ներառյալ կից ծանոթագրությունները):
34. Օրենքով և սույն կարգով սահմանված՝ մամուլում պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը հրապարակելուց հետո հնգօրյա ժամկետում ընկերությունները Կենտրոնական բանկի վիճակագրության վարչությանը ներկայացնում են այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը և ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթի էլեկտրոնային տարբերակը:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՎԱԶԴ

35. Ընկերության գովազդը, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարունակում է որևէ սակագին և(կամ) ծառայության մասին տեղեկություն, պետք է առնվազն պարունակի .
- 1) գովազդատու ընկերության կայքի հասցեն,
 - 2) ընկերության հետ հաղորդակցման տվյալները (հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե կամ այլն),
36. Ընկերություններն իրավունք չունեն իրենց գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իրենց անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ ընկերության վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ տվյալ ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:
37. Գովազդը չպետք է ազդեցություն ունենա գովազդվող ծառայության կամ կազմակերպության նկատմամբ սպառողի վերաբերմունքի վրա՝ անճշտության, անորոշության, չափազանցության կամ թերներկայացման միջոցով:
38. Գովազդում առկա անվանումները, տեքստերը, հղումները, կանխատեսումները, բնութագրումը կամ գովասանքը, ծառայության վերաբերյալ հատուկ տեղեկությունները և նախազգուշացումները ներկայացվում են հստակ, չպետք է լինեն անհասկանալի և ինչ որ ձևով քողարկված լինեն գովազդի բովանդակության, դիզայնի, կառուցվածքի կամ ներկայացման միջոցով:
39. Գովազդում առկա տողատակի ծանոթագրությունները կամ մանր շարվածքով տեքստերը ընթեռնելի լինելու համար ներկայացվում են բավարար մեծությամբ: Առկայության դեպքում հղում է կատարվում համապատասխան աղբյուրին մանրամասներին ծանոթանալու համար:
40. Եթե գովազդում ներկայացվում են մեկից ավելի ծառայություններ, ապա անհրաժեշտ է հստակորեն տարանջատել յուրաքանչյուր ծառայության տարբեր հատկանիշներն այնպես, որ սպառողը կարողանա ծառայությունները հստակ տարբերակել միմյանցից:

ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

41. Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները հասանելի են դարձվում սպառողների համար ընկերության գործունեության վայրում՝ առանձին տեղեկատվական ամփոփագրերի ձևով:
42. Ընկերության կողմից հաստատված յուրաքանչյուր տեղեկատվական ամփոփագիր յուրաքանչյուր ծառայության (պայմանագրի) վերաբերյալ պարունակում է.
- 1) սույն կանոնակարգի գլուխ 9-ում սահմանված տեղեկությունը,
 - 2) տեղեկություն այն մասին, թե որտեղ (կայքի հասցե, հեռախոսահամար, կամ կապի այլ միջոց) կարելի է ծանոթանալ ծառայության ամբողջական պայմանները,
 - 3) եթե տվյալ ամփոփագրում նշված ծառայությունը սահմանված պայմաններով ունի գործողության ժամկետ, ապա ամփոփագրի դիմային էջում նշվում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ծառայությունը ուժի մեջ է: Եթե ամփոփագրի հրապարակման պահին հայտնի չէ, թե ամփոփագրում նշված ծառայությունը մինչև որ ժամկետը

կգործի, ապա ամփոփագրի դիմային էջի վրա նշվում է ամփոփագրի հրապարակման ամիսը և տարեթիվը, ինչպես նաև նշում, որ ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել և մանրամասների համար ում և ինչ կապի միջոցներով կարող են դիմել:

42.1. ԱՊՊԱ-ի վերաբերյալ տեղեկատվական ամփոփագրերը, բացի սույն կանոնակարգի 42-րդ կետով նախատեսված տեղեկություններից, ներառում են նաև.

- 1) Բյուրոյի հասցեն, աշխատանքային ժամերը, կապի միջոցները, Բյուրոյի ինտերնետային կայքի հասցեն,
- 2) ընկերության՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գործող մասնաճյուղերի և (կամ) գործակալների ցանկը, որը պարունակում է այդ մասնաճյուղերի (գործակալների) գործունեության վայրի հասցեները, աշխատանքային ժամերը և կապի միջոցները, ինչպես նաև հայտարարություն այն մասին, որ այդ ցանկը վերջնական չէ ու կարող է փոփոխվել, և ավելի ճշգրիտ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է անմիջապես դիմել ընկերությանը կամ այցելել ընկերության տնային էջ:

43. Տեղեկատվական ամփոփագրերը կարող են լինել յուրաքանչյուր ծառայության համար առանձին: Միասնական մեկ ամփոփագրի ձևով ներկայացնելու դեպքում ամփոփագիրը պարունակում է յուրաքանչյուր ծառայության (պայմանագրի) վերաբերյալ օրենքով և սույն կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը առանձին :

ԳԼՈՒԽ 8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

44. Ընկերությունը ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, միջազգային ստանդարտների ուղեցույցների և/կամ լիազոր մարմնի կողմից հաստատված իրավական ակտերի:

45. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները և ատոլիտորական եզրակացությունը հրապարակվում են ֆինանսական տարվա ավարտից հետո 120-օրյա ժամկետում, իսկ միջանկյալ հաշվետվությունները՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

46. Ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում ընկերությունը հրապարակում է համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ցանկության դեպքում ընկերությունը կարող է հրապարակել նաև առանձին հաշվետվությունները:

ԳԼՈՒԽ 9. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

47. Տեղեկատվական ամփոփագրերում և (կամ) իներնետային կայքում՝ մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ հրապարակելիս ընկերությունները ներկայացնում են իրենց կողմից մատուցվող յուրաքանչյուր ծառայության մասին էական տեղեկությունները, սակագները, ծառայությունների մատուցման պայմանները, ինչպես նաև այն կապի միջոցները (հեռախոսահամարները և(կամ) ինտերնետի կայքի հասցեն), որոնցով կարելի է սպառիչ տեղեկություններ ստանալ ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև սույն գլխում ներկայացված տեղեկատվությունը: Ընդ որում՝

- 1) հաճախորդի կողմից պարտավորությունները ժամանակին չկատարելու, կամ որոշ գործողություններ կատարելու(չկատարելու) դեպքում հաճախորդի համար հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և(կամ) այլ ձևով:
- 2) այն տեղեկությունները, որոնց վրա հաճախորդների կողմից ուշադրություն չդարձնելը տարածված է գործնականում և(կամ) հաճախակի բողոքների առարկա է, ներկայացվում են աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և(կամ) այլ ձևով:
- 3) Կասպի միջոցներից օգտվելը հաճախորդի համար վճարովի լինելու դեպքում նշում է կատարվում այդ, ինչպես նաև վճարի չափի մասին:
- 4) Եթե ընկերությունը մատուցում է ծառայություններ ընկերության կողմից հաստատված ծառայության ընդհանուր պայմանների հիման վրա, ապա այդ պայմանները ներկայացվում են ծառայության պայմանների հետ:
- 5) Կենսաթոշակային ֆոնդերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է այլ ֆոնդերից առանձնացված ձևով:

48. **Վարկերի և փոխառությունների (այսուհետ՝ վարկ) գծով տեղեկություններում ներկայացվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը՝**

- 1) վարկավորվող գումարի նվազագույն և առավելագույն սահմանաչափերը,
- 2) վարկի տրամադրման նվազագույն և առավելագույն ժամկետները ըստ արժույթի և(կամ) առկայության դեպքում ըստ այլ գործոնների,
- 3) վարկի արժույթը,
- 4) մայր գումարի և տոկոսագումարների մարումների հաճախականությունը (ամսական, եռամսյակային, կիսամյակային, այլ),
- 5) վարկի անվանական և սպառողական կրեդիտների դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքները ըստ արժույթի և առկայության դեպքում ըստ այլ գործոնների (օրինակ՝ ավտոմեքենաների ձեռքբերման համար տրամադրված վարկերի տոկոսադրույքը տարբեր է հին ու նոր, կամ տարբեր մակնիշի ավտոմեքենաների համար): Ընդ որում տրվում է աչքի ընկնող նշում, որում բացատրվում է անվանական և տարեկան փաստացի տոկոսադրույքների տարբերությունը (օրինակ՝ «ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԻ ՀԻՍԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԸ ՅՈՒՅՅ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՁ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՍԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՍԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՅԵՈՒՄ...»),
- 6) վարկերի տոկոսագումարի հաշվարկման կարգը՝ այդ թվում նշելով՝ տոկոսադրույքը կիրառվում է մայր գումարի, թե նվազող մնացորդի նկատմամբ, տոկոսագումարների հաշվարկի ներկայացուցչական օրինակ,
- 7) անվանական տոկոսադրույքի փոփոխություն նախատեսելու դեպքում՝ նշում այդ մասին, փոփոխման կարգն ու պայմանները: Ընդ որում նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և(կամ) այլ ձևով (օրինակ՝ «ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՅՍ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ

ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ»),

- 8) ապահովության (գրավի) տեսակը, եթե նման պահանջ առկա է,
- 9) «վարկ հարաբերած գրավի արժեք» առավելագույն ցուցանիշը՝ տոկոսային արտահայտությամբ (գրավի առկայության դեպքում),
- 10) վարկով ձեռք բերվող ապրանքի, ծառայության կամ աշխատանքի համար վճարվող կանխավճարի և վարկի գումարի տոկոսով արտահայտված հարաբերության նվազագույն մեծությունը: Եթե կանխավճարի չափը տարբերվում է՝ կախված վարկավորվող գույքի հատկանիշներից կամ այլ գործոններից, ապա «կանխավճար/վարկի գումար» հարաբերությունը նշվում է ըստ այդ գործոնների:
- 11) Վարկավորման համար վարկառուի (կրեդիտառուի) կողմից ընկերության պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկը և դրանց չափը (միջակայքը),
- 12) վարկառուի կողմից վարկավորման համար երրորդ անձանց (այդ թվում՝ պետական մարմինների) կողմից մատուցվող այլ օժանդակ ծառայություններից (օրինակ՝ գույքի գնահատում, ապահովագրություն) օգտվելը պարտադիր պայման լինելու դեպքում նշում այդ մասին: Այլ օժանդակ ծառայություններից օգտվելը պարտադիր լինելու դեպքում այդ ծառայությունների գինը (զնի միջակայքը):
- 13) վարկառուի կողմից իր պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում տույժերի չափը և կիրառման դեպքերը, ինչպես նաև նշում հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ: Ընդ որում նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և(կամ) այլ ձևով, այդ թվում՝
 - ա. գրավի բռնագանձման վերաբերյալ (օրինակ՝ «ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՉԵՐ ԳՈՒՅՔԸ (տունը, մեքենան կամ այլ) ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆՍԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԳՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ԶԵՐ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՍԱՐՈՒՄՆԵՐԸ,
 - բ. վարկային ռեզիստի վերաբերյալ (օրինակ՝ «ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՉԵՐ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՉԵՐ ՄԱՄԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՈՒԳԻՍՏՐՈՒՄ»):
 - գ. Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում վարկառուի այլ գույքի հաշվին պարտավորությունների մարման հնարավորությունը (առկայության դեպքում):
- 14) վարկի գումարի տրամադրման եղանակները (օրինակ՝ կանխիկ, անկանխիկ վճարում, այլ),
- 15) վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերը և պայմանները, ներառյալ նաև հնարավոր տույժերը:
- 16) Սպառողի համար վարկի հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները: Օրինակ՝ վարկը տրամադրվում է միայն բանկում ավանդ ունեցող հաճախորդներին, կամ սպառողական վարկերը տրամադրվում

են միայն կոնկրետ առևտրի կետերից ապրանքներ ձեռք բերելու դեպքում, կամ վարկառուի տարեկան շրջանառությունը չպետք է փոքր լինի որոշ գումարից և այլն,

17) վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

18) ընկերության կողմից վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը, վարկային հայտ ներկայացնողին որոշման մասին տեղեկացնելու և վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը:

19) ընկերության կողմից հաճախորդին վարկ տրամադրելու դրական որոշման գործոնները և վարկի մերժման գործոնները:

49. Վարկերի առանձին տեսակների մասին տեղեկությունները՝ բացի սույն կանոնակարգի 46-րդ կետում նշված պայմաններից, պարունակում են նաև լրացուցիչ տեղեկություններ, մասնավորապես՝

1) **Անշարժ և շարժական գույքի ձեռքբերման (ինչպես նաև բնակարանների վերանորոգման) համար տրամադրվող վարկերի գծով.**

ա. վարկավորվող գույքի ապահովագրության պահանջի առկայությունը: Պետք է նշվի նաև՝ ապահովագրության համար հիմք է ընդունվում գույքի շուկայական արժեքը, թե՞ վարկի գումարը:

2) **Վարկային գծերի (օվերդրաֆտների) գծով.**

ա. արտոնյալ ժամկետը («գրեյս պերիոդ») (առկայության դեպքում),

բ. փաստացի օգտագործված միջոցների դիմաց հաշվարկված տոկոսադրույքը, տոկոսագումարների հաշվարկման կարգը,

գ. եթե նախատեսվում է տոկոս, չօգտագործված միջոցների դիմաց, ապա նշում այդ պայմանների մասին:

3) **Սպառողական վարկերի գծով՝** վարկի ձևակերպման վայրը (բանկում, թե՞ առևտրի կետերում, գլխասամասում, թե՞ մասնաճյուղում),

4) **Արտարժույթով տրամադրվող վարկերի գծով՝** շեշտվում է, որ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

50. **Վճարային քարտերի** (այսուհետ՝ քարտեր) մասին տեղեկություններում ներկայացվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) տրամադրվող քարտի տեսակը, օրինակ՝ հաշվարկային (դեբետային), վարկային (կրեդիտային), կանխավճարային և պատկանելիությունը որևէ համակարգի (համակարգերի), օրինակ՝ ԱրՋա, ՎԻՋԱ, այլ,

2) տրամադրվող քարտի տեսակին բնորոշ մատուցվող ծառայությունների ցանկը (իրականացվող գործառնությունների տեսակները) կամ կիրառվող սահմանափակումները, այն դեպքում երբ կան գործառնության կատարման հաճախականության կամ գումարային մեծության սահմանափակումներ, ապա այդ սահմանափակումները նույնպես նշվում են՝ թույլատրելի չափով,

3) քարտի գործողության ժամկետը,

4) քարտային հաշվի արժույթի տեսակը,

5) քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը (առկայության դեպքում),

6) ցանկացած տիպի միջնորդավճարները, որոնք գանձվում են քարտապանից, նրան մատուցված ծառայությունների դիմաց, ներառյալ՝ վճարային քարտերի տրամադրման և (կամ) տարեկան սպասարկման

գումարները, վճարային քարտերով գործառնությունների իրականացման համար գանձվող կոմիսիոն կամ այլ վճարները, ներառյալ նաև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընկերության և այլ ընկերությունների կողմից վճարային քարտ սպասարկող կանխիկացման սարքավորումներից (ավտոմատ գանձման մեքենաների, կանխիկացման POS տերմինալների, այլ) օգտվելու դեպքում քարտապանից գանձվող սակագները (նվազագույն և առավելագույն չափը) և պայմանները, միջազգային վճարային քարտերով արտասահմանում գործառնությունների իրականացման համար կիրառվող սակագները և պայմանները:

- 7) Արտարժույթով արտահայտված գործառնությունների (քարտային հաշվի արժույթը քարտով գործարքի արժույթից տարբերվելու դեպքում) կատարման ժամանակ կիրառվող փոխարժեքի մասին տեղեկություն,
- 8) քարտ ստանալու (քարտային հաշիվ բացելու) համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո քարտի տրամադրման և ակտիվացման ժամկետներն ու պայմանները,
- 9) վճարային քարտի և ՊԻՆ-կոդի և (կամ) անձը նույնականացնող՝ քարտային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագրի (ծածկագրերի) օգտագործման և պահպանման կանոնները,
- 10) քարտապանի կողմից քարտային գործառնության բողոքարկման ժամանակահատվածը, ինչպես նաև բողոքարկման և ճշգրտման ժամանակ կիրառվող ընթացակարգերը և քարտապանի կողմից դրանց կիրառման կարգը և միջոցները,
- 11) վճարային քարտի կորստի/գողանալու դեպքում կիրառվող ընթացակարգերը և դրանց կիրառման կարգը և միջոցները,
- 12) ընկերության կողմից քարտ սպասարկող կանխիկացման սարքավորումների (ավտոմատ գանձման մեքենաների, կանխիկացման POS տերմինալների, այլ) ցանկը՝ հասցեներով:
- 13) Եթե ընկերությունը մատուցում է հեռահար կապի միջոցներով ծառայություններ (ինտերնետի, բջջային հեռախոսի և այլ միջոցով), ապա հրապարակվում են նաև հեռահար ծառայությունների պայմանները և կարգը, գործարքի էությունից բխող ընկերության և քարտապանի պատասխանատվության սահմանները:

51. **Բանկային (ընթացիկ) հաշիվների** գծով տեղեկություններում նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

- 1) բանկի կողմից վարվող հաշիվների տարատեսակները,
- 2) հաշվի բացման և փակման ընթացակարգերը, ժամկետները, սակագները, հաշվի սպասարկման և գործառնությունների իրականացման սակագները,
- 3) հաշվով հնարավոր գործառնությունների տեսակները և (կամ) սահմանափակումները,
- 4) պայմանագրով հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ տոկոսներ վճարելու պայման նախատեսված լինելու դեպքում անվանական տոկոսադրույքի և տարեկան տոկոսային եկամտաբերության մեծությունը, հաշվարկման կարգը և հաշվեգրման ժամկետները: Ընդ որում տրվում է աչքի ընկնող նշում, որում բացատրվում է անվանական տոկոսադրույքի և տարեկան տոկոսային եկամտաբերության տարբերությունը (օրինակ՝ «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ

ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՅԵՈՒՄ...»),

- 5) հաշվի նվազագույն մնացորդի մեծությունը,
- 6) հաշվի արժույթը, հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով կատարվող գործառնությունների իրականացման հնարավորությունը, հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշվին դրամական միջոցների մուտքի և ելքի դեպքում փոխարկման համար կիրառվող փոխարժեքը,
- 7) հաշվետիրոջ կողմից հաշվով գործառնություններ չկատարելու դեպքում հաշվի պահպանման ծախսերը՝ ելնելով գործարք չկատարելու վաղեմությունից,
- 8) հաշվին դրամական միջոցները մուտքագրելու և ելքագրելու առավելագույն ժամկետները,
- 9) հաճախորդի պահանջով՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված գործարքների վերաբերյալ հարցման սակագները,
- 10) հաշվով կատարված գործառնությունների դիմաց քաղվածքների, կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները,
- 11) էլեկտրոնային միջոցներով հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման հնարավորությունը (օրինակ՝ ինտերնետ բանկինգ, մոբայլ բանկինգ և այլն) և առկայության դեպքում հավաստման ընթացակարգերը,
- 12) բանկային հաշվի պայմանագրի լուծման պայմանները (օրինակ՝ հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պայմանագրով նախատեսված նվազագույն չափից պակաս լինելու, մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնությունների բացակայության դեպքում և այլն), ինչպես նաև պայմանագրի լուծման դեպքում հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի նկատմամբ իրականացվող հետագա գործողությունները (օրինակ՝ մնացորդը հաշվետիրոջ կողմից նշված հաշվեհամարին փոխանցելը, ցպահանջ կամ ժամկետային ավանդին վերաձևակերպելը և այլն),
- 13) հայտարարություն այն մասին, որ հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման,
- 14) հայտարարություն այն մասին, որ առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա և այդ մասին հաշվետիրոջը տեղեկացնելու կարգը,
- 15) «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի երաշխավորված չափի մասին տեղեկացումը:
- 16) բանկային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

52. **Ավանդների** գծով տեղեկություններում նշվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով և 4-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները,
- 2) անվանական տոկոսադրույքի և տարեկան տոկոսային եկամտաբերության մեծությունը, հաշվարկման կարգը և հաշվեգրման ժամկետները ներկայացուցչական օրինակի միջոցով: Ընդ որում տրվում է աչքի ընկնող նշում, որում բացատրվում է անվանական տոկոսադրույքի և տարեկան տոկոսային եկամտաբերության տարբերությունը (օրինակ՝ «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՄԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՅԵՈՒՄ...»),
- 3) ավանդի տեսակը (օրինակ՝ ցպահանջ, ժամկետային կամ այլ),
- 4) հաշվից քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման սակագները՝ ըստ իրականացված գործարքի ժամկետի վաղեմության,
- 5) հաճախորդի հաշվի պահպանման սակագները՝ կախված հաշվով գործարք չկատարելու վաղեմությունից,
- 6) այլ լրացուցիչ պայմաններ, ինչպիսիք են, օրինակ՝ ժամկետային ավանդը ժամկետից շուտ հետ վերցնելու պայմանները, պայմանագրի գործողության ընթացքում ավանդի գումարի փոփոխություն, այլ:
- 7) Հայտարարություն այն մասին, որ երբ ժամկետային ավանդի ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուի տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով, եթե տոկոսների այլ չափ նախատեսված չէ պայմանագրով:
- 8) Հայտարարություն այն մասին, որ երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ցպահանջ ավանդի պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- 9) Հայտարարություն այն մասին, որ բանկային ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը քաղաքացին ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
- 10) Հայտարարություն այն մասին, որ ավանդի հաշվում ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված

դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

11) Հայտարարություն այն մասին, որ ավանդը կարող է ներդրվել բանկ որոշակի երրորդ անձի անունով (նման հնարավորության առկայության դեպքում):

53. **Դրամական (փողային) փոխանցումների** իրականացման մասին տեղեկությունը առնվազն ներառում է.

1) **Հայաստանի Հանրապետության տարածքում առանց բանկային հաշվի բացման** դրամական (փողային) փոխանցումների ժամանակ ըստ դրամական (փողային) փոխանցումների տեսակների (պետական և տեղական բյուջե վճարումների ընդունում, կենսաթոշակների, նպաստների և սոցիալական այլ վճարների վճարում, հանրային ծառայությունների համար (կոմունալ) վճարումների ընդունում և այլն).

ա. փոխանցումների իրականացման կարգը (այդ թվում՝ առկայության դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը),

բ. սակագները,

գ. փոխանցման իրականացման առավելագույն ժամկետները: Այն դեպքում, երբ կենսաթոշակների, նպաստների և սոցիալական այլ վճարների համար ընկերության կողմից սահմանված է հաճախորդներին վճարման ժամանակահատված (օրինակ՝ յուրաքանչյուր ամսվա 15-25-ը), ապա տեղեկացում այդ մասին:

դ. Մխալների ուղղման հնարավորության դեպքում կիրառվող ընթացակարգը և ժամկետները,

ե. տեղեկություններ այլ լրացուցիչ վճարների մասին, եթե այդպիսիք նախատեսված են կամ կարող են ծագել գործարքի ընթացքում:

2) **Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առանց բանկային հաշվի բացման** ֆիզիկական անձանց կողմից իրականացվող դրամական (փողային) փոխանցումների ժամանակ. (բացառությամբ ՀՀ տարածքում պետական և տեղական բյուջե վճարումների, հանրային ծառայությունների համար (կոմունալ) վճարումների):

ա. դրամական միջոցների փոխանցում նախաձեռնողի, ինչպես նաև դրամական միջոցները ստացողի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (այդ թվում՝ անձը հաստատող փաստաթղթերը) և դրանց ներկայացման կարգը,

բ. փոխանցման արժույթը,

գ. փոխանցումների առավելագույն ժամկետները,

դ. փոխանցման առավելագույն սահմանաչափերը (առկայության դեպքում),

ե. ընկերության և առկայության դեպքում այլ անձանց կողմից գանձվող սակագները և միջնորդավճարները ըստ յուրաքանչյուր երկրի, տարածաշրջանի, գումարի մեծության, արժույթի և այլն, եթե առկա է այդպիսի տարանջատում,

զ. փոխանցումների ուղղությունները, աշխարհագրությունը և այն ընկերությունները, որոնցից կարող են փոխանցման շահառուները ստանալ փոխանցված միջոցները,

է. լրացուցիչ ծառայությունների մատուցման հնարավորության դեպքում հաճախորդին տեղեկացում այդ մասին,

ը. փոխանցումը նախաձեռնողի կողմից փոխանցման չեղյալացման, ինչպես նաև փոխանցում ստացողի (շահառուի) չհայտնաբերվելու դեպքում փոխանցված դրամական միջոցների հետ վերադարձման ընթացակարգը, ժամկետները, ինչպես նաև սխալների ուղղման հնարավորության դեպքում ժամկետները, պայմանները,

թ. ընկերության պարտավորությունը հաճախորդին տրամադրել յուրաքանչյուր մատուցված ծառայության կատարման վերաբերյալ անդորրագիր,

ժ. տեղեկացում դրամական փոխանցում նախաձեռնող (ստացող) հաճախորդին այն մասին, թե ընկերությունը դրամական փոխանցումների ընդունումը (վճարումը) կկատարի փոխանցման արժույթով, թե այլ արժույթով:

54. **Ապահովագրական ծառայությունների** գծով տեղեկություններում նշվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

- 1) յուրաքանչյուր դասին համապատասխան կիրառվող սակագները, սակագների տատանման միջակայքը (սակագնի հնարավոր նվազագույն և առավելագույն չափերը)՝ կախված ապահովագրության որոշակի պայմաններից (չհատուցվող գումարից և այլն) կամ ապահովագրական ռիսկի վրա ազդող գործոններից,
- 2) ապահովագրության տեսակը և ապահովագրության դասը և(կամ) ենթադասը համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի,
- 3) իրականացվող ապահովագրության դասի (ենթադասի) կանոնները (պայմանները), որոնք առնվազն ներառում են՝

ա. ապահովագրության օբյեկտը,

բ. ապահովագրական պատահարը (պատահարները), որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը. ապահովագրական պատահար չհամարվող դեպքերը կամ ռիսկերը (բացառությունները):

գ. ապահովագրական գումարի չափը, հաշվարկման կարգը,

դ. ապահովագրական հատուցում ստանալու կարգը և գործընթացը՝ ապահովադրի կողմից ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո իրակացվելիք գործողությունները և ժամկետները, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ներկայացման կարգը, հատուցման համար հայտը ընկերությանը ներկայացնելուց հետո որոշման կայացման ժամկետը և պայմանները: Ընդ որում, եթե ապահովադրի որոշ գործողությունները (անգործությունը) հանդիսանում են ապահովագրական հատուցումը մերժելու հիմք, ապա այդ մասին նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և(կամ) այլ ձևով:

ե. **ապահովագրավճարի** հաշվարկման կարգը,

զ. ապահովագրավճարի վճարման կարգը, ձևը, ժամկետները.

է. ապահովադրի կողմից ապահովագրավճարի՝ պայմանագրում սահմանված ժամկետներում և կարգով չվճարելու հետևանքները:

ը. վնասի գնահատման կարգը.

թ. ապահովադրի իրավունքները և պարտավորությունները, ընդ որում այն պարտավորությունները, որոնց չկատարումը կարող է հանգեցնել ապահովագրական հատուցման չվճարմանը և այդ պարտավորությունների չկատարումը տարածված է հաճախորդների մոտ, նշվում են աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և(կամ) այլ ձևով (օրինակ՝ «ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՔ 24 ԺԱՄՎԱ ընթացքում ՀԱՅՏՆԵԼ, իսկ այնուհետև 2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին պայմանագրի գործողության ժամանակ ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված ԲՈԼՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Այս պայմանի խախտումը ԿՀԱՆԳԵՑՆԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆԸ:», կամ «ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՔ հնարավոր որևէ միջոցով (հեռախոս, ֆաքսիմիլային կապ, էլ. փոստ) ԱՆՀԱՊԱԳ, բայց ՈՉ ՈՒՇՔԱՆ 24 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ հայտնել Ապահովագրողին տեղի ունեցած պատահարի մասին: Այս պայմանի խախտումը ԿՀԱՆԳԵՑՆԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆԸ:», կամ «Ավտոտրանսպորտային միջոցը ՎԱՐԵԼՈՒ համար ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ցուցակը կարող է ՓՈՓՈԽՎԵԼ ՄԻԱՅՆ ԸՆԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ: Այս պայմանի խախտումը ԿՀԱՆԳԵՑՆԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆԸ:», կամ «Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրված գույքը ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆՎԻ պատշաճ վիճակում և ՉՊԵՏՔ Է ՎԵՐԱՅՎԻ ԿԱՄ ՓՈՓՈԽՎԻ ԱՌԱՆՑ ԸՆԵԿՐՈՒԹՅԱՆ հետ նախօրոք համաձայնության: Այս պայմանի խախտումը ԿՀԱՆԳԵՑՆԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆԸ:»):

- 4) Ապահովագրության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
- 5) ապահովագրության պայմանագրի վերակնքման, վերաձևակերպման կարգն ու պայմանները,
- 6) ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարեցման և լուծման դեպքերն ու պայմանները, ներառյալ նաև ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճարների մեծության չափը և հաշվարկման կարգը,
- 7) ԱՊՊԱ-ի գծով ներկայացվում է նաև հետևյալ տեղեկատվությունը.

ա. ԱՊՊԱ կտրոնի վերաբերյալ՝ դրա փակցնելու պահանջը և տեղը, ԱՊՊԱ կտրոնի կորստի, հափշտակման, վնասման կամ ոչնչացման դեպքում կիրառվող ընթացակարգերը, տեղեկացում ԱՊՊԱ կտրոնի օգտագործման կանոնների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների մասին,

բ. Համաձայնեցված հայտարարագրի վերաբերյալ՝ համաձայնեցված հայտարարագրի լրացման և այն ապահովագրական ընկերությանը ներկայացման ընթացակարգերը,

գ. ոչ ստանդարտ իրավիճակներում (օրինակ, երբ պատահարում ներգրավված են մի քանի տուժողներ և նրանց պատճառված վնասների ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված ապահովագրական գումարը) կիրառվող ապահովագրական հատուցումների հաշվարկման օրինակներ, բացատրություններ,

- դ. Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին ապահովագրական հատուցումների վճարման դեպքերն ու կարգը,
- ե. ապահովագրավճարների գեղչերի և հավելավճարների համակարգի (Բոնուս-Մալուս համակարգ) էությունը և կիրառման ժամկետները:

55. **Ներդրումային ծառայությունների և ոչ հիմնական ծառայությունների** մասին առնվազն ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

- 1) ծառայության անվանումը, տեսակը,
- 2) մատուցվող ծառայություններից օգտվելու միջնորդավճարների, ծախսերի և այլ վճարների, այլ հնարավոր լրացուցիչ գանձումների չափի մասին: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա՝ ծառայություններից օգտվելու համար վճարվելիք գումարների հաշվարկման կարգի մասին: Եթե սույն ենթակետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխարժեքը և դրա հետ կապված ծախսերը: Գանձվող միջնորդավճարների մասին տեղեկատվությունը սպառողին ներկայացվում է նաև առանձին տողով:
- 3) սպառողի կողմից վճարումներ կատարելու պայմանների, եղանակների և ժամկետների մասին,
- 4) սպառողների հետ կապի իրականացման կարգի և ժամկետների մասին (սպառողից պատվերներ և առանձնահատուկ ցուցումների ստանալու դեպքում),
- 5) պայմանագրերի ժամկետների մասին (ինչ ժամկետայնությամբ ներդրումային ծառայությունների պայմանագրեր կարող են կնքվել),
- 6) կնքված պայմանագրերի դադարեցման դեպքում սպառողի միջոցների վերադարձման կարգի մասին,
- 7) արժեթղթերի տեսակները, որոնցում կարող են ներդրվել սպառողների միջոցները, ինչպես նաև ընդհանրական տեղեկություններ այդ արժեթղթերի և նրանց հետ կապված ռիսկերի մասին,
- 8) սպառողներից գործարքների իրականացման պատվերների և հանձնարարականների ընդունման և կատարման ընթացակարգերի մասին,
- 9) գործարքների իրականացման վայրերի մասին,
- 10) շահերի բախման կանխարգելմանն ուղղված քաղաքականության վերաբերյալ,
- 11) մատուցվող ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:
- 12) նշում այն մասին, թե ով է կրում տվյալ ծառայության սպառման ռիսկը: Ընդ որում նշումը տրվում է աչքի ընկնող ձևով (օրինակ՝ իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարման ծառայությունների մատուցման դեպքում կարող է նշվել. «ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ պատվերում նշված պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ՌԻՍԿԸ ԿՐՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԸ: Ներդրումային ընկերությունը ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՅԵԼՈՒ հաճախորդի

վնասները, եթե դրանք չեն պատճառվել ընկերության կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:»):

56. **Ապահովագրական բրոքերի կողմից մատուցվող ծառայությունների** վերաբերյալ տեղեկություններում առնվազն նշվում է ապահովագրական բրոքերների միջոցով ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, վերաապահովագրավճարների, վերաապահովագրողից ստացվող հատուցումների փոխանցումների իրականացման տևողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, եթե ապահովագրական բրոքերը իրականացնում է նման գործառնություն:

56.1 Ֆոնդերի գծով տեղեկություններում ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) Պայմանագրային ֆոնդերը ներկայացվում են համաձայն հավելված 12-ի աղյուսակի, որում լրացվում են.

ա. ֆոնդի անվանումը,

բ. փայի դասը,

գ. վերջին մեկ աշխատանքային օրվա, մեկ ամսվա, վեց ամսվա, մեկ տարվա, երկու տարվա, հինգ տարվա և ստեղծման օրվանից փայի հաշվարկային արժեքի փոփոխությունը,

դ. փայի հաշվարկային արժեքը տվյալ աշխատանքային օրվա դրությամբ:

2) Կորպորատիվ ֆոնդերը ներկայացվում են համաձայն հավելված 13-ի աղյուսակի, որում լրացվում են.

ա. ֆոնդի անվանումը,

բ. վերջին մեկ աշխատանքային օրվա, մեկ ամսվա, վեց ամսվա, մեկ տարվա, երկու տարվա, հինգ տարվա և ստեղծման օրվանից բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխությունը,

գ. բաժնետոմսի հաշվարկային արժեքը տվյալ աշխատանքային օրվա դրությամբ:

3) Փակ (միջակայքային) ֆոնդերի համար սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված հավելված 12-ի 3-րդ և 4-րդ և հավելված 13-ի 2-րդ և 3-րդ սյունակները չեն լրացվում, բացառությամբ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

4) Բաց, փակ (միջակայքային) ֆոնդերի համար սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված հավելված 12-ի 4-ից 10-րդ սյունակները և հավելված 13-ի 3-ից 9-րդ սյունակները լրացվում են միայն այն դեպքերում, երբ լրացվող համապատասխան ժամանակահատվածի առաջին և վերջին օրերի դրությամբ հաշվարկվել է փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը: Այն դեպքերում, երբ լրացվող ժամանակահատվածի առաջին և (կամ) վերջին օրերի դրությամբ չի հաշվարկվել փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը, ապա համապատասխան սյունակում դրվում է «-» նշանը:

56.2 Յուրաքանչյուր ֆոնդի գծով տեղեկություններում առնվազն նշվում են.

1) ֆոնդի անվանումը և գործունեության ժամկետը (եթե նրա գործունեությունը սահմանափակված է որոշակի ժամկետով), ֆոնդի կառավարչի, ֆոնդի պահառուի և ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի (եթե այն ֆոնդի կառավարչից տարբերվող այլ անձ է, եթե ոչ՝ նշում այդ մասին) անվանումը,

գտնվելու վայրը, կապի միջոցներ և հղում ինտերնետային կայքին (առկայության դեպքում),

- 2) ֆոնդի ստեղծման ամսաթիվը (օր, ամիս, ամսաթիվ),
- 3) ֆոնդի տեսակը՝ ըստ ներդրումային քաղաքականության, ըստ ֆոնդի փայերի կամ բաժնետոմսերի, թողարկման և հետգնման (մարման) կառուցակարգի, ըստ տարատեսականացվածության, ըստ իրավական կարգավիճակի և որակավորված ներդրողների ֆոնդ չհանդիսանալու հանգամանքի,
- 4) ֆոնդի ներդրումային քաղաքականության համառոտ նկարագիրը, այդ թվում՝ ներդրումների ուղղությունները, սահմանաչափերը և այլ յուրահատուկ (աշխարհագրական, ճյուղային և այլն) սահմանափակումները, ներդրումների հետ կապված ռիսկերի համառոտ նկարագիրը,
- 5) տեղեկություններ ֆոնդի ակտիվներից գանձման ենթակա վճարների և ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի մասին, որն առնվազն ներկայացվում է ըստ վճարների և ծախսերի հետևյալ տեսակների՝ ֆոնդի ակտիվներից գանձման ենթակա ֆոնդի կառավարչի և ֆոնդի պահառուի պարզևավճարները, ֆոնդի հարկերը, ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ֆոնդի կառավարման և պահառության հետ ուղղակիորեն կապված և ֆոնդի ազդագրով (առկայության դեպքում), կանոններով (կանոնադրությամբ) սահմանված ծախսերը, ինչպես նաև այլ ծախսերը, որոնց կատարումը ֆոնդի ակտիվների հաշվին անմիջականորեն նախատեսված է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,
- 6) ֆոնդի յուրաքանչյուր դասի փայի կամ բաժնետոմսի հաշվարկային արժեքը, ինչպես նաև տեղաբաշխման և հետգնման (մարման) գները և համապատասխան ամսաթիվը, որի դրությամբ դրանք ներկայացված են,
- 7) փայ (բաժնետոմս) գնելու կամ ֆոնդին միանալու համար անհրաժեշտ քայլերի նկարագրությունը, ֆոնդին միանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
- 8) փայի (բաժնետոմսի) հետգնման (մարման) կարգի համառոտ նկարագիրը, պայմանները և ժամկետները,
- 9) կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի համար մասնակցի կամ մասնակցի օգտին երրորդ անձի կողմից կենսաթոշակային կուտակային վճարների վճարման կարգը և ժամկետները,

- 10) կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի համար կառավարչի կողմից մասնակցին կենսաթոշակներ վճարելու ժամկետը, պարբերականությունը և ձևերը,
- 11) ֆոնդի ակտիվների կառավարումից ստացված եկամտի՝ մասնակիցների միջև բաշխման համառոտ քաղաքականությունը,
- 12) նշում այն մասին, որ ֆոնդի և ֆոնդի կառավարչի վերաբերյալ մասնակիցը առավել մանրամասն տեղեկություններ կարող է ստանալ ֆոնդի ազդագրից (առկայության դեպքում) և կանոններից (կանոնադրությունից),
- 13) կապի միջոցները, որոնց միջոցով կարելի է լրացուցիչ տեղեկություններ ստանալ տվյալ ֆոնդի վերաբերյալ,
- 14) ֆոնդի պորտֆելի կառուցվածքը, որը պետք է ներկայացնի ֆոնդի ներդրումներն ըստ աշխարհագրական և ոլորտային բաշխվածության,
- 15) ֆոնդում ներդրման սահմանափակումները, եթե այդպիսիք առկա են,
- 16) ֆոնդի հերթական և արտահերթ ժողովների գումարման մասին հայտարարություն (ժողովի առկայության դեպքում),
- 17) ֆոնդի ժողովի ընդունած որոշումները (ժողովի առկայության դեպքում),
- 18) ֆոնդում կառավարչի մասնակցության չափը,
- 19) լրացուցիչ ծառայությունները, արտոնությունները, որոնք ստանում է տվյալ ֆոնդի մասնակիցը,
- 20) ֆոնդի արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության անվանումը, կապի միջոցները, հղում ինտերնետային կայքին (առկայության դեպքում),
- 21) նշում այն մասին, արդյոք ֆոնդի փայերը (բաժնետոմսը) թույլատրված են կարգավորվող շուկայում առևտրին,
- 22) բաց ֆոնդի համար՝ հայտարարություն, որ յուրաքանչյուր մասնակից կարող է ցանկացած ժամանակ փայը (բաժնետոմսը) ներկայացնել հետգնման (մարման),
- 23) միջակայքային ֆոնդի համար՝ միջակայքային ժամանակահատվածը և հայտարարություն, որ յուրաքանչյուր մասնակից կարող է փայը (բաժնետոմսը) ներկայացնել հետգնման (մարման) տվյալ ժամանակահատվածում,
- 24) ենթաֆոնդերը (առկայության դեպքում), ընդ որում, յուրաքանչյուր ենթաֆոնդի վերաբերյալ ներկայացվում է սույն կետի 1-23 ենթակետերով պահանջված տեղեկատվությունն ըստ կիրառելիության:

56.3 Ֆոնդի կառավարչի ինտերնետային կայքում սույն կանոնակարգի 56.1 կետով սահմանված հավելված 12-ում և հավելված 13-ում առկա աղյուսակները պետք է պարունակեն հղում կառավարչի յուրաքանչյուր ֆոնդի էջին, որում պետք է ներկայացվեն կանոնակարգի 56.2 կետով սահմանված տեղեկությունները, ընդ որում, կանոնակարգի 56.2 կետի 17)-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը տեղադրվում է ներբեռնվող փաստաթղթի ձևով:

56.4. Ֆոնդի կառավարչի ինտերնետային կայքի յուրաքանչյուր ֆոնդի էջում տեղադրվում է հղում առնվազն հետևյալ փաստաթղթերին.

- 1) ֆոնդի ազդագիրը (առկայության դեպքում), կանոնները (կանոնադրությունը) ,
- 2) ֆոնդի տարեկան ու միջանկյալ հաշվետվությունները, արտաքին աուդիտի եզրակացությունը,
- 3) ֆոնդի նախորդ երեք տարիների տարեկան հաշվետվությունները:

56.5. Ֆոնդի կառավարչի ինտերնետային կայքի յուրաքանչյուր ֆոնդի էջում պետք է գրաֆիկորեն ներկայացվեն փայի հաշվարկային արժեքները և փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխությունն առնվազն վերջին 5 տարիների համար, իսկ, եթե ֆոնդը գործում է ավելի կարճ ժամանակահատվածի ընթացքում, ապա՝ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը և դրա փոփոխությունը ֆոնդի գործելու ամբողջ ժամանակահատվածի համար: Ընդ որում, պետք է հնարավոր լինի տեսնել փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը և դրա փոփոխությունը ցանկացած ժամանակահատվածի համար (փակ (միջակայքային) ֆոնդերի համար ներկայացվում է փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը և դրա փոփոխությունը, եթե ժամանակահատվածի առաջին և վերջին օրերի դրությամբ հաշվարկվել է փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը) և պետք է ապահովվի փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի և իմաստավից հենանիշի գրաֆիկների համադրման հնարավորությունը:

56.6 «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված դեպքում փայերի թողարկումը, տեղաբաշխումը կամ հետգնումը (մարումը) կասեցնելու դեպքում, կառավարչի կայքի գլխավոր էջում պետք է լինի հայտարարություն այդ մասին, ինչը պետք է առնվազն ներառի՝

- 1) կասեցման պատճառը,
- 2) կասեցման տևողությունը:

ԳԼՈՒԽ 10. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

57. Ընկերությունները իրենց գործունեության վայրում՝ տեսանելի տեղում փակցնում են
- 1) Հայտարարություն ցանկացած անձի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի, ժամկետի, տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարի մասին: Ընդ որում, հայտարարությունում հղում է տրվում այն իրավական ակտին և ակտի կոնկրետ դրույթին, համաձայն որի ծագում է նման իրավունքը:
 - 2) հայտարարություն այն մասին, որ ֆիզիկական անձ հաճախորդը հնարավորություն ունի ներկայացնելու ընկերության և հաճախորդի միջև կնքվող գործարքից բխող պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին: Այն դեպքում, երբ ընկերությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել, սույն կետով նախատեսված հայտարարությունում նշում է կատարվում նաև այդ մասին (համաձայն՝ հավելված 9-ի) :
 - 3) ծառայության ընդհանուր պայմանները, որոնք տեղադրվում են նաև սպառողների համար հասանելի տեղում՝ թղթային տարբերակով: Ընդ որում ծառայությունների ընդհանուր պայմանները փոփոխվելու դեպքում դրանք տեղադրվում (փակցվում) են գործունեության վայրում ոչ ուշ քան այդ պայմանների կամ դրանցում փոփոխությունների ուժի մեջ մտնելը: Այն դեպքում, երբ ծառայությունը տարբեր ժամանակահատվածներում մատուցվում է տարբեր ծառայության մատուցման պայմաններով, ապա ծառայության ընդհանուր պայմանների թղթային տարբերակի վրա նշվում է ժամակահատվածը (օր/ամիս/ տարի, ժամ:րոպե), որի համար կիրառելի են:
 - 4) ընկերության աշխատանքային ժամերը
 - 5) Ընկերության կողմից որևէ ծառայության մատուցումը կամ մասնաճյուղի գործունեությունը ժամանակավոր կամ ընդմիջտ դադարեցվելու դեպքում հայտարարություն, որը պարունակում է դադարեցված մատուցվող ծառայության անվանումը (ծառայության դադարեցման դեպքում) կամ գործունեությունը դադարեցրած մասնաճյուղի անվանումը ու գտնվելու վայրը, ինչպես նաև դադարեցման պատճառը կամ համառոտ բնութագիրը, դադարեցման ժամանակահատվածը, հեռախոսահամար և (կամ) կապի այլ միջոցներ, որով հնարավոր է մանրամասն տեղեկություններ ստանալ դադարեցված ծառայության(ների) վերաբերյալ, նշում այն մասին, թե ինչ այլընտրանքային միջոցներով սպառողը կարող է օգտվել տվյալ ծառայությունից(ներից): Ժամանակավոր դադարեցման դեպքում հայտարարությունը փակցվում է ժամանակավոր դադարեցման ողջ ժամանակահատվածի ընթացքում, ընդմիջտ դադարեցման դեպքում՝ դադարեցումից հետո 3 ամսվա ընթացքում:
58. Ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները անվճար հասանելի են դարձվում սպառողների համար ընկերության գործունեության վայրում առնվազն առանձին տեղեկատվական ամփոփագրերի միջոցով:

59. Ընկերությունը յուրաքանչյուր ինքնասպասարկման սարքավորման (օրինակ՝ ավտոմատ գանձման սարքի, արտարժույթի փոխանակման ավտոմատ սարքի և այլն) կողքին՝ սպառողների համար տեսանելի վայրում, կամ սարքի էկրանին մշտապես (նույնիսկ սարքի խափանման դեպքում) ներկայացված է լինում հետևյալ տեղեկատվությունը.

1) ընկերության անվանումը, որն իրականացնում է սարքավորման սպասարկումը,

2) տվյալ սարքավորումից օգտվելու քայլերի համառոտ նկարագրությունը,

3) այն հեռախոսահամարը (-ները), որոնցով կարող են սպառողները դիմել տվյալ

սարքավորման հետ կապված հարցերի կամ խնդիրների առաջացման դեպքում,

4) այն վճարային քարտերի տեսակները, որոնք սպասարկում է տվյալ սարքավորումը,

5) տվյալ ինքնասպասարկման սարքավորման միջոցով ինչ-որ ծառայության մատուցումը ժամանակավոր կամ ընդմիջտ դադարեցվելու դեպքում՝ հատարարություն, որը պարունակում է դադարեցված մատուցվող ծառայության անվանումը, դադարեցման ժամանակահատվածը, հեռախոսահամար և(կամ) կապի այլ միջոցներ, որով հնարավոր է մանրամասն տեղեկություններ ստանալ դադարեցված ծառայության վերաբերյալ, ինչ այլընտրանքային միջոցներով սպառողը կարող է օգտվել տվյալ ծառայությունից: Ժամանակավոր դադարեցման դեպքում հայտարարությունը փակցվում է ժամանակավոր դադարեցման ողջ ժամանակահատվածի ընթացքում, ընդմիջտ դադարեցման դեպքում՝ դադարեցումից հետո 3 ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Սիրելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և */ընկերության անվանումը/* միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և */ընկերության անվանումը/* միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք */ընկերության անվանումը/ /Ընկերության անվանումը/* պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: */Ընկերության անվանումը/* պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել */ընկերության անվանումը/* պատասխանը, կամ
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, կամ
3. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը), կամ
4. */Ընկերության անվանումը/* պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
5. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՑՈՒՄԱՆ
ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄ
ԿՐԵՄԱՆ ԿՐԵՄԱՆ



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:



Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝

Հասցե՝

Հեռ.՝

Էլ. հասցե՝

Ֆաքս՝



Ընկերությունը այստեղ լրացնում է սույն հավելվածի 2-րդ էջում առկա * կամ ** նշանի ներքո պարունակվող տեղեկատվությունը, ընդ որում՝

* այս նշումը կատարվում է, եթե Ընկերությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

** այս նշումը կատարվում է, եթե Ընկերությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ չի կնքել գրավոր համաձայնագիր Ֆինանսական համակարգի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ:



Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և /ընկերության անվանումը/ միջև վեճերը, սակայն կարող է /ընկերության անվանումը/ նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ /ընկերության անվանումը/ խախտել է օրենքի պահանջները:



ՀՀ Կենտրոնական բանկ

Հասցե՝
 Հեռ.՝
 ...այստեղ լրացվում է Կենտրոնական բանկում սպառողների շահերի պաշտպանության համար պատասխանատու ստորաբաժանման հեռախոսահամարները ..
 Էլ. հասցե՝
 Ֆաքս՝
 կայք՝



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և /ընկերության անվանումը/ միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, դա նշանակում է, որ /ընկերության անվանումը/ հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք գրկվում եք /ընկերության անվանումը/ հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն:

* Միբելի՝ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ /ընկերության անվանումը/ հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

Դա նշանակում է, որ /ընկերության անվանումը/ չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից /ընկերության անվանումը/ դեմ կայացված որոշումները:

** Միբելի՝ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ /ընկերության անվանումը/ չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

Դա նշանակում է, որ /ընկերության անվանումը/ կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից /ընկերության անվանումը/ դեմ կայացված որոշումները:

Հավելված 3

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 210-Ն որոշմամբ

Հավելված 12

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

Ներդրումային Ֆոնդի անվանում	Ներդրումային Ֆոնդի փայի դաս	Ներդրումային ֆոնդի փայի հաշվարկային արժեք օր/ամիս/տարեթիվ դրությամբ	Փայի հաշվարկային արժեքի փոփոխությունը						
			օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 1 աշխատանքային օրվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 1 ամսվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 6 ամսվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 1 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 2 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 5 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ դրությամբ հաշվարկված Ֆոնդի ստեղծման օրվանից
1	2	3	4	5	6	7	8	9	10

1. Փայի հաշվարկային արժեքի փոփոխություն՝ յուրաքանչյուր կոնկրետ ժամանակահատվածի համար փայի հաշվարկային արժեքի փոփոխությունն է՝ արտահայտված տոկոսներով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Փայի հաշվարկային արժեքի փոփոխություն} = \frac{\Phi_{ՀԱ}_1 - \Phi_{ՀԱ}_0}{\Phi_{ՀԱ}_0} \cdot 100\%$$

Որտեղ՝

1) $\Phi_{ՀԱ}_1$ -ն փայի հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ

2) $\Phi_{ՀԱ}_0$ -ն փայի հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ

Հավելված 4

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 210-Ն որոշմամբ

Հավելված 13

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

Ներդրումային կորպորատիվ Ֆոնդի անվանում	Ներդրումային կորպորատիվ Ֆոնդի բաժնետոմսի հաշվարկային արժեք օր/ամիս/տարեթիվ դրությամբ	Ներդրումային կորպորատիվ Ֆոնդի բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխությունը						
		օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 1աշխատանքային օրվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 1 ամսվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 6 ամսվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 1տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 2 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված նախորդ 5 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ դրությամբ հաշվարկված Ֆոնդի ստեղծման օրվանից
1	2	3	4	5	6	7	8	9

1. **Բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխություն**՝ յուրաքանչյուր կոնկրետ ժամանակահատվածի համար բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխությունն է՝ արտահայտված տոկոսներով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխություն} = \frac{P_{2U_t} - P_{2U_0}}{P_{2U_0}} * 100\% \quad \#$$

Որտեղ՝

- 1) P_{2U_0} -ն բաժնետոմսի հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ
- 2) P_{2U_t} -ն բաժնետոմսի հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ